ՔԱՐԹԼԻ-ԿԱԽԵԹՈՒՄ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԵՐԻ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ

Բանալի բառեր - Վրաստան, Հայաստան, Լենկ Թեմուր, տնտեսություն, առևտուր, Տփղիս, գաղթ, ձեռագիր հիշատակարաններ, եկեղեցական փաստաթղթեր։

ՄՈՒՏՔ

XIV-XV դդ. ընթացքում Հայաստանը եւ Վրաստանը ակամա ներքաշվեցին մոնղոլական տերության՝ Ոսկե Հորդայի եւ Լենկ Թեմուրի ստեղծած պետության պայքարի մեջ։ Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում արտաքին ազդեցությունների դրսևորմամբ ստեղծվում են կեցության համար անտանելի պայմաններ։ Սոցիալ-տնտեսական և քաղաքական առավել բարենպաստ պայմանների ակնկալիքով հայերը զանգվածաբար հեռանում են հայրենիքից՝ բնակություն հաստատելով տարբեր երկներում այդ թվում՝ Վրաստանում, մասնավորապես, Քարթլի-Կախեթում։

Խոսելով Քարթլի-Կախեթում հայերի հաստատման նախադրյալների մասին պետք է նախևառաջ նկատի ունենալ Արևելյան Վրաստանի և նրա քաղաքների քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը և դերը նվաճողների համար։ Մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի հայ նոր գաղթականների նկատմամբ վրաց թագավորների վարած քաղաքականության, տեղում նորաբնակ հայերի հաստատման և գործունեության պարզաբանման խնդիրները։ Հետազոտողները այդ ժամանակաշրջանի պատմությունը լուսաբանելիս առայժմ առանձնակի ուշադրություն են դարձրել միայն Լենկ Թեմուրյան արշավանքներից հետո Հայաստանի և Վրաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի նկատմամբ։ Հետևաբար չենք կարող քննության նյութ չդարձնել Վրաստանի հայկական գաղթօջախի տվյալ պատմափուլը, որը կարևոր դերակատարում ունեցավ համայնքի ստվարացման և զարգացման տեսանկյունից։

ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ XIV ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹԹ. - XV ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

XIV դարի 30-ական թվականներից Վրաստանն աստիճանաբար դուրս է գալիս մոնղոլական տիրապետությունից[1]: Այս շրջանը համընկնում է Դեմետրե II Անձնուրացի որդի Գիորգի V արքայի (Գեորգի Պայծառափայլ՝ 1314/1318–1346 թթ.) իշխանության տարիներին: Գեորգի V-ը մինչեւ 1314 թ. Դավիթ Նարինի անչափահաս որդի Գեորգի VI-ի խնամակալն էր, սակայն 1314 թ. նա ասպարեզից հեռացնում է անչափահաս եղբորորդուն եւ գրավում գահը[2]: Մոնղոլները Գիորգի V–ին հանձնեցին հարկերը հավաքելու իրավունքը, որը չափազանց կարեւոր ձեռքբերում էր. վերջ էր տրվում մոնղոլական հարկահավաքների, հատկապես՝ հարկերը կապալով վերցնող պաշտոնյաների կամայականություններին ու չարաշահումներին: Միջոցառումներ իրականացվեցին երկրի տնտեսական վիճակը բարելավելու, ֆինանսական հզորությունը ամրապնդելու նպատակով[3]: Եւ չնայած Վրաստանի քաղաքային կյանքը եւս ճգնաժամի մեջ էր, մի շարք քաղաքներ շարունակում էին մնալ որպես տնտեսական կենտրոններ: 1328 թ. Հռոմի Հովհաննես XXII պապը Տփղիսի մասին գրում էր հետեւյալը. «Երկար խորհրդակցությունից եւ ուսումնասիրությունից հետո մենք եւ մեր եղբայր կարդինալները համոզվեցինք, որ Տփղիսը՝ Վրացական թագավորության կենտրոնը, հանդիսանում է ամենալավ, նշանավոր, խիտ բնակեցված, հարմար եւ հարուստ քաղաքը… այդ իսկ պատճառով Զմյուռնիայից [Սմիրնայից] եպիսկոպոսությունը տեղափոխում են նշված քաղաք՝ Տփղիս»[4]: Հայտնի է, որ Տփղիսը XIV դարում շարունակում էր գտնվել Մերձավոր Արեւելքից դեպի Արեւմուտք՝ Սուլթանիե – Ղարաբաղ – Պարտավ (Բարդա) – Գանձակ (Գանջա) – Շամքոր –

---

[1] Հմմ. **Н. А. Бердзенишвили**, Очерк из истории развития феодальных отношений в Грузии в XIII-XVI вв., Тбилиси, 1938, с. 12.

[2] Ըստ **Վ. Կիկնաձեի**՝ Գեորգի Պայծառափայլի գահակալության սկիզբ պետք է համարել 1318 թ., քանի որ 1314-1317 թթ. Օլջեյթու խանի աջակցությամբ գահ էր բարձրացել Գեորգի VI-ը: Տե՛ս ց. Կոչեաձե, XIV սաստկեանի դասաւորման Վրաստանի պատմութեան մասին (գեորգի V-ի գահակալման տարեդարձ), Վրաստանի գիտութիւնների ակադեմիայի մատեան, 1983, № 2, էջ. 178-188.

[3] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. II, Երեւան, 2016, էջ 68:

[4] **მ. თამარაშვილი,** ისტორია კათოლიკობისა ქართველთა შორის ნამდვილის საბუთების შემოტანითა და განმარტებით XIII საუკუნიდგან ვიდრე XX საუკუნემდე, ტფილისი. 1902, გვ. 32.

Տփղիս տարանցիկ ուղու վրա[1], հետեւաբար նվաճողների կողմից Վրաստանը դիտվում էր, որպես համաշխարհային առեւտրին մասնակից դառնալու կարեւոր գործոն: Այս հանգամանքով կարելի է բացատրել Տփղիսի եւ վրացական քաղաքների (գլխավորապես Արեւելյան Վրաստանի) մի մասի ամբողջական ավերածությունից զերծ մնալու փաստը: XIV դարում վրացական քաղաքների մի մասը՝ Գորի, Քութայիսի, Դմանիսի, Ախալցխա եւ այլք, հիմնականում շարունակում էին իրենց ակտիվ գործունեությունը[2]: Վրաստանի ներքին ու արտաքին համեմատաբար բարենպաստ իրավիճակը պահպանվեց Դավիթ IX-ի (1346-1360 թթ.) եւ նրա հաջորդ Բագրատ V–ի (1363-1393 թթ.) օրոք:

Հայաստանը շարունակում էր գտնվել մահմեդականների ամբողջական տիրապետության տակ[3]: Մնացյալ հայ ֆեոդալական ուժերը հազիվ էին պահպանում իրենց գոյությունը, եւ արդյունքում գերիշխանությունն անցնում է մահմեդական իշխանությունների ձեռքը[4]: Այսպես 1349 թ. ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Անկաւ սով սաստիկ, կոտորեցան յերից մասանց Հայոց աշխարհս եւ յետ սովուս մխիթարութեան եհաս աստուածասաստ բարկութիւն ի վերայ մեր եւ անկաւ մահ տարաժամ յամենայն աշխարհս...[5]»: Առեւտրի ու արհեստների ծաղկուն կենտրոններ հանդիսացող բազմաթիվ մարդաշատ քաղաքները վերջնականապես զրկվեցին արեւելյան եւ արեւմտյան երկրների հետ իրենց երբեմնի առեւտրական սերտ կապերից: Ծանր հարկերը եւ պաշտոնյաների կեղեքումներն այնպիսի դրություն էին ստեղծել հայերի համար, որ բնակչության մի ստվար զանգված ստիպված եղավ գաղթել օտար երկրներ[6], այդ թվում՝ Քարթլի-Կախեթ (Արեւելյան Վրաստան):

XIV դ. վերջին քառորդում Հայաստանը եւ Վրաստանը ենթարկվում են Լենկ Թեմուրի ավերիչ հարձակումներին: 1386 թ. գարնանը նրա զորքերն առաջին անգամ արշավում են Հայաստան[7]:

---

[1] Ըստ մահմեդական աղբյուրի՝ Տփղիսը կապված էր Արեւելքից Արեւմուտք ընթացող ճանապարհի հետ (Սուլթանիա-Կարաբագ-Բարդա-Գանջա-Շամխոր-Տփղիս), տե՛ս The geographical part of the Nuzhuat-al-qulub composed by Hamdallah Mustawfi of Qazwin in 740 (1340), London, 1915, p.182.

[2] **Ш. Месхия,** Города и городской строй феодальной Грузии (XVII-XVIII вв.),Тбилиси, 1959, с. 53.

[3] **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ III, Երեւան, էջ 333:

[4] Տե՛ս **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրութիւն, Աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 117-118:

[5] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 375:

[6] **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 334:

[7]Տե՛ս նույն տեղում, էջ 356:

Թովմա Մեծոփեցու հաղորդմամբ՝ «Եւ զայլ ամեն այն բազմութիւն հաւատացելոցն չարչարեալ տանջէին սովով, սրով, գերութեամբ, անտանելի չարչարանօք եւ անագորուն բարուք. անմարդաձայն արարին զամենալից գաւառն Հայոց»: Պատմիչն ապա նշում է, որ այստեղից. «Եւ ընթացեալ բազում զօրօք ի Փայտակարան Տփղիս քաղաք՝ էառ զնա եւ գերեաց անթիվ եւ անհամար»[1]: Լենկ Թեմուրի զորքերը տեւական պաշարումից հետո գրավում են Տփղիսը եւ գերի վերցնում այնտեղ ամրացած Բագրատ V-ին[2]: Բագրատին հաջողվում է առերես իսլամ ընդունելով եւ Թեմուրից խորամանկությամբ զորք վերցնելով վերադառնալ Վրաստան՝ իբրեւ թե այն Թեմուրին հնազանդեցնելու համար: Հասնելով Վրաստան՝ նա այդ զորքերը գցում է նախապես իր որդիների կողմից պատրաստած ծուղակը եւ ոչնչացնում դրանց[3]: Դրան հաջորդում է Թեմուրի պատասխան արշավանքը (1387թ.), որով վերջինս հաշվեհարդար է տեսնում Բագրատի հետ՝ կոտորելով բնակչությանը, ավերելով բնակավայրերը եւ քանդելով եկեղեցիներն ու վանքերը: Այս մասին որոշակի տեղեկություններ են պահպանվել նաեւ վրացական աղբյուրներերում .«Մեծ Բագրատ թագավորն ու Թեմուրը պայքարել էին, Թեմուրը հաղթահարեց, Տփղիսը գրավեց, Քարթլին ոչնչացրեց եւ քանդեց բոլոր եկեղեցիները, բերդերն ու կառույցները»[4]:

Թեմուրի նոր արշավանքների նպատակը Հյուսիսային Կովկասն էր, որտեղ Ոսկե Հորդայի դեմ պատերազմը շարունակվեց նոր թափով: Այդմ՝ 1395 թ., չնայած Գեորգի VII–ի (1393-1403 թթ.[5]) համառ դիմադրությանը, Թեմուրը նորից ներխուժում է Վրաստան եւ ավերածություններ գործում հարավ-արեւելյան շրջաններում[6]: Ըստ «Վրաց հուշարձանի» տեղեկության. «[Թեմուրը]… այրեց ու ավերեց ամբողջ Վրաստանը, եւ ցրեց մեռելների դիակները, ինչպես խոտի մի խուրձ»[7]: Գեորգի VII–ի օրոք Լենկ Թեմուրի դեպի Վրաստան արշավանքի մասին հակիրճ հիշատակվում է նաեւ 1447 թվականին Գեորգի VII-ի (1446–1466 թթ.) եւ Ալեքսանդր I-ի

---

[1] **Թովմա Մեծոփեցի**, նշվ. աշխ., էջ 19-21:

[2] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. II, էջ 336:

[3] **Թովմա Մեծոփեցի,**նշվ.աշխ., գց. 21.

[4] **თ. ჟორდანია,** ქრონიკები და სხვა მასალა საქართველოს ისტორიისა და მწერალობისა (1213 წლიდამ – 1700 წლამდე), წიგნი მეორე, ტფილისი, თბილისი, 1897, გვ. 201:

[5] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. II, էջ 337:

[6] *P. Purton,* A History of the Late Medieval Siege, Woodbridge, 2010, pp. 178-181, տե՛ս նաեւ Руи Гонсалес де Клавихо, Дневник путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406), Москва, 1990, с. 72, 155, 159, 160, տե՛ս https://runivers.ru/lib/book3067/9675/ (5/11/2022).

[7] **შ. მესხია,** ძეგლი ერისთავთა, თბილისი, 1954 ,გვ. 30, (տե՛ս նաեւ С. Какабадзе, Хроника ксанских эриставов начала XV в., – Письменные памятники Востока, «Историко-филологические исследования», Ежегодник 1968, Москва, 1970, с. 118.

կողմից վավերացված Մցխեթի կաթողիկոսության ապահարկության մասին հրովարտակում. «Գեորգի թագավորի ժամանակներում, եւ նրա թագավորության եւ հովանավորության ժամանակ այնտեղ [այսինքն՝ Վրաստան] եկան անարդարները եւ բոլոր երկրների հողերի տերը [Լենկ Թեմուրը]: … Թեմուրը բազում ու անհամար ուլուսներով, եւ ներխուժեցին Վրաստան, եւ շատ հոգիներ սրախոխղող եղան բերաններից. քրիստոնյաների հիմքն ու լուսավորիչը, Մցխեթի գահը»[1]:

Անթվակիր հայկական ձեռագիր հիշատակարաններից մեկի հաղորդմամբ՝ Գեորգի VII–ի կառավարման հավանաբար առաջին տարիներին Վրաստանը խորին խաղաղության մեջ էր .«Արդ զամենայն վիշտս եւ զաղէտս կսկծելիս ո կարէ պատմել զերկնահանգէտ սուրբ աթոռիս, ցսպառելն յիշխանաց եւ ի հոգեկիր արանց, թափուր եւ դատարկ ի փարթամ արգասեաց: Արդ, գրեալ եղեւ սա ի ժամանակս թագաւորութեան Գէորգեա որդւոյ Բագրատ յաղթող եւ հզօր արքայի, զի յաւուրս սորա եղեւ. խորին խաղաղութիւն կողմանն Վրաց, ձեռամբ Յովաննիսի եւ Յովաննիսի սիրասնունդ աշակերտի»[2]:

Ըստ ձեռագրի՝ Հայաստանը «ցսպառելն յիշխանաց արանց», ինչը կրկին փաստում է, որ XIV դարի երկրորդ կեսից սկսած հայ ֆեոդալական տները հետզհետե կորցնում են իրենց իշխանական դիրքերը: Հայ ֆեոդալներից շատերը իրենց կալվածքներից չզրկվելու համար ընդունում էին մահմեդականություն, մի մասն էլ դիմադրում էր՝ վերածվելով մանր հողատերերի կամ փորձում իրենց առեւտրի ասպարեզում[3]: Նկատենք նաեւ, որ ստեղծված իրավիճակից ելնելով՝ հայ ֆեոդալական ներկայացուցիչների մի մասն էլ պատսպարվել է Վրաստանում: Այդպիսի ընտանիքներից մեկն էր Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, ում ձեռքում էր կենտրոնացած Սյունյաց նահանգի գավառների հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունը[4]: Բուրթելյան տան ներկայացուցիչները ճանաչված էին նաեւ Սյունիքի սահմաններից դուրս: Այսպես, Բուրթել Օրբելյանը (1306-1344 թթ. Սյունյաց մեծ իշխան), ով Ստեփանոս Օրբելյանի եղբորորդին էր, հիշատակվում է նաեւ որպես «…Վրաց թագազարմ իշխան»[5]: Նկատենք, որ Բուրթել Օրբելյանի հաջորդ սերունդները եւս շարունակում էին վայելել վրաց իշխանությունների հավատարմությունը՝ հնարավորություն ունենալով պատսպարվելու հենց այնտեղ: Թովմա Մեծոփեցու

---

[1] ქართული სამართლის ძეგლები, ტ. III, თბილისი, 1970, გვ. 187.

[2] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. II, էջ 337:

[3] **Հ. Փափազյան,** Հոդվածներ, հտ. I, Երեւան 2020, էջ 377:

[4] Այս մասին մանրամասն տե՛ս Լեւոն Խաչիկյան, Աշխատություններ, հտ. Բ, Երեւան, 2017, էջ 7-40, տե՛ս https://www.matenadaran.am/ftp/el_gradaran/Khachikyan,B.pdf (11/05/2022):

[5] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 297:

հաղորդմամբ՝ Սմբատ Օրբելյանը օգտվելով այն հանգամանքից, որ Կարա-Յուսուֆը զբաղված էր Աղ-կոյունլուների դեմ պատերազմով, դաշնակցում է Սուլթան Ահմադի[1] հետ ընդդեմ Կարա-Յուսուֆի[2] (1389-1420)[3]: Սակայն 1410 թ. Ահմադը սպանվում է, իսկ Սյունիքում Սմբատի կալվածքները բռնագրավվում են: Սմբատը ստիպված պատսպարվում է Վրաստանում, ավելին՝ 1412 թ. ձեռագրում Սմբատը եւ իր որդի Բեշքենը հիշատակվում են նաեւ որպես Գորիի մոտակայքում գտվող Ուփլիսցիխե գյուղաքաղաքի իշխաններ[4]:

Լենկ Թեմուրի եւ Կարա-Յուսուֆի պարբերաբար կրկնվող արշավանքներից եւ ավերածություններից հետո Հայաստանը մոտ 10 տարի՝ մինչեւ 1420 թ., խաղաղ դրության մեջ էր[5]: XV դարում հայ աշխարհիկ ֆեոդալականությունը որպես որոշակի քաղաքական ուժ դադարել էր գործել[6]: Հետեւաբար երկրի սոցիալ-տնտեսական կյանքը շարունակում էր գտնվել անմխիթար վիճակում: Բացի այդ Հայաստանում հայ բնակչությունը խիստ նվազել էր, դրան զուգահեռ բնակչության կազմը փոփոխվել էր՝ Լենկ Թեմուրի կողմից տեղում բնակեցվում էին քոչվոր ցեղեր[7], ինչը գրեթե անհնար էր դարձնում որեւէ տնտեսական առաջընթաց: Հարկ է նշել, որ բնակչությունը խիստ նվազել էր նաեւ Վրաստանում, այսպես՝ ըստ Պարսկաստանի Սուլթանիա քաղաքի արքեպիսկոպոս եւ դեպքերի ժամանակակից Հովհաննես դե Գալոնիֆոնտիբուսի՝ «Վրաստանը քննարկվող ժամանակաշրջանում խիտ բնակեցված չէր, այստեղ ապրում էին վրացիներ, հայեր, սարացիններ եւ հրեաներ, ովքեր զբաղվում էին առեւտրով»[8]: Նկատենք, որ քննարկվող ժամանակաշրջանում, Վրաստանում առևտրի գոյությունը պայմանավորված էր Արևելյան Վրաստանի, մասնավորապես Տփղիսի, առևտրի տարանցիկ ուղիների վրա գտնվելու հետ: Հայտնի է, նաև, որ Լենկ Թեմուրը ձգտում էր իր ձեռքում կենտրո-

---

[1] Իրանում ձևավորված մոնղոլական անկախ ավատական պետություններից մեկի Ջելայիրյանների (1340-1432) առաջնորդ:: Այս մասին մանրամասն տե՛ս Վ.Բայբուրդյան, Իրանի պատմություն, Երևան 2005, էջ 266-270:

[2] Թուրքմենական (կարա կոյունլու ցեղամիության առաջնորդ Կարա Յուսուֆն էր: Այս մասին մանրամասն տե՛ս Վ.Բայբուրդյան, նշվ.աշխ. ,էջ 277-290:

[3] **Թովմա Մեծոփեցի**, նշվ.աշխ.,էջ 46:

[4] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, հտ. I (1401-1450 թթ.), Երեւան, 1955, էջ 133:

[5] **Margaryan G.,** Quelques remarques sur l'histoire économique-fiscale de l' Arménie en période post-ilkhanide, AJNES (ARAMAZD), volume IX, 2015, p. 130.

[6] **Հ.Փափազյան,** նշվ.աշխ. էջ 377:

[7] **Հ. Մանանդյան,** նշվ.աշխ., էջ 372-373:

[8] **A. Kern,** "Libellus de notitia orbis" Johannes' III (de Galonifontibus?) O. P. Erzbischof von Sultłthanyeh, Roma, 1938, p.113.

նացնել Այսրկովկասից դեպի արեւմուտք անցնող առեւտրական ուղիները[1]: Այս պարագայում, Վրաստանը դիտելով որպես տարանցիկ ուղի՝ Թեմուրը շահագրգռված էր պահելու այդ ներուժը իր ձեռքում: Այսմ՝ կարելի է բացատրել Քվեմո -Քարթլիի քայքայված, սակայն վերականգման ենթակա սոցիալ-տնտեսական կյանքը:

ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱՆԱՆ ՆՈՐ ԳԱՂԹԻ ԱԼԻՔԸ ՔԱՐԹԼԻ -ԿԱԽԵԹ

1412 թվականին գահ բարձացած Կոստանդին I–ի (1407–1412 թթ.) որդի Ալեքսանդր I–ին (1412–1442 թթ.)[2] հաջողվում է որոշակի լուծումներ տալ Վրաստանի առջեւ ծառացած մի շարք խնդիրներին: Նրա գլխավոր գործերից մեկը դարձավ երկրի ծայրաստիճան քայքայված տնտեսության վերականգնումը, իսկ ներքաղաքական կյանքում՝ միասնականության պահպանումը:

Լենկ-Թեմուրի ավերիչ արշավանքներից հետո Ալեքսանդր I–ը շինարարական եւ վերականգնողական լայն գործունեություն ծավալեց[3]: Վրաց արքան իր երկրաշեն գործունեությունն իրականացնելու համար յուրաքանչյուր ծխից տարեկան 40 թեթրիի չափով հրամայում է գանձել մալի կոչված հարկը[4]: Ալեքսանդր I կողմից Տփղիսի եւ Մցխեթի տաճարների վերականգման աշխատանքների մասին համառոտ տեղեկությունն է հաղորդում նաեւ մեր կողմից արդեն նշված Մցխեթի կաթողիկոսարանի հրովարտակը[5]: Երկրի տնտեսությանը զարկ տալու համար Ալեքսանդրը գիտակցում էր, որ նախ եւ առաջ պետք է լուծեր իր առջեւ ծառացած մեկ այլ խնդիր՝ խիստ նվազած Վրաստանի բնակչության համալրումը: Եւ բնակչության, ավելի ճիշտ թագավորահպատակ գյուղացիների թիվը մեծացնելու համար վրաց թագավորը սկսեց խրախուսել հայերի վերաբնակեցումը Վրաստան: Իրենց հերթին հայերը նրա մասին հատուկ ջերմությամբ եւ երախտագիտությամբ են արտահայտվում: Այսպես, Վրաստանում հաստատված Դավիթ Քահանան նշում է. «..զոր Տէր Աստուած պահեսցէ զսա անփորձ կենաւք եւ պարագայց ամաւք՝ զաւրաւք իւրովք՝ ի վանումն եւ հերքումն անաւրինաց խըմբից եւ ի հաստատութիւն սրբոց ե-

---

[1] **Д. Кацитадзе,** Грузия на рубеже XIV-XV веков, Тбилиси, 1975,с.237.

[2] **Н. Ломоури**, Грузия, Тбилиси, 1966, стр. 29; **ი. ჯავახიშვილი,** ქართველი ერის ისტორია, წიგნი IV, თბ., 1951, გვ. 15-42.

[3] **Д. Мшвениерадзе,** Строительное дело в древней Грузии, Тбилиси, 1952, стр. 56.

[4] **Margaryan G.,** The Fiscal System of The Eastern Georgia in The Late Medieval Epoch.. Georgian Source-Studies, volume XVI, 2014, p.119.

[5] ქართული სამართლის ძეგლები, დასახ ნაშრომი, გვ. 187.

կեղեցւոյ»[1]: Նկատենք, որ հայ քահանայի նման վերաբերմունքը պատահական չէր, քանի որ նա համարում էր Ալեքսանդրին այն քաղաքական ուժը, ում շուրջը կարող էին համախմբվել հայերը, ապա վկայում քննարկվող ժամանակաշրջանում Հայոց եկեղեցու համար ստեղծված բարենպաստ պայմանների մասին:

Հայերի ներկայության եւ նրանց հիմնական զբաղմունքի վերաբերյալ կարեւոր տեղեկությունն է պարունակում «Քարթլիի, Կախեթի, Մեսխեթի կաթողիկոսական կալվածքների ապահարկության վավերագիրը»[2]: Վավերագրում կաթողիկոսական ունեցվածքների շարքում նշված է Բազարի (Զագեմի)[3] կոչվող բնակավայրը, ուր ապրում էր հայ եւ հրեա վաճառականների 27 տուն: Վրաց հետազոտող Թ. Ժորդանիան վավերագիրը թվագրում է 1392 թվականով[4], որը, ըստ նրա, վավերացվել է Գեորգի VII-ի կողմից: Մեկ այլ հետազոտող՝ Շ. Մեսխիան, այն թվագրում է XV դարի 40-ական թվականներով, իսկ վավերացումը վերագրում Ալեքսանդր I–ին[5]: Ս.Կակաբաձեն անդրադառնալով վավերագրին, հակված է կարծելու, որ այն հետագայում առանց փոփոխությունների արտագրվել և հաստատվել է Գեորգի VII-ի կողմից 1496թ.[6]: Ըստ հեղինակի նույն վավերագիրը արտագրվել և լրացումներով հաստատվել է Ալեքսանդր I-ի օրոք: Հայտնի է, որ Գեորգի VII-ի թագադրումը տեղի է ունեցել 1393 թ.[7], հետեւաբար Թ. Ժորդանիայի պնդումը, թե այն հաստատվել է 1392 թ. Գեորգի VII-ի կողմից, տարակուսելի է: Ավելին, վավերագրի վերջում հիշատակվում է Ալեքսանդր I թագավորի (1412–1442 թթ.) անունը, ուստի կարելի է համաձայնել Ս.Կակաբաձեին, որ նույն՝ 1392թ. վավերագիրը հետագայում որոշ լրացումներով արատգրվել և հաստատվել են Գեորգի VII-ի և Ալեքսանդր I թագավորների կողմից: XV դարի ընթացքում տնտեսական աճի հետեւանքով Կախեթում հայտնվեցին մի շարք քաղաքներ, որտեղ նկատվեց բնակչության արագ աճ[8]: Դրանց թվում էր Բազարի քաղաքը, որը քննարկվող ժամանակաշրջանում դարձել էր խոշոր վաճառաշահ քա-

---

[1] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հտ I, էջ 487-488:

[2] **თ. ჯორდანია,** დასახ ნაშრომი, გვ. 261.

[3] П. Мурадян, Армянская эпиграфика Грузии, Картли и Кахети, Ереван, 1985, с. 54, տե՛ս նաեւ **Ш. Месхия**, указ. соч., с. 100.

[4] თ. ჟორდანია, დასახ ნაშრომი, გვ. 261.

[5] **Ш. Месхия,** указ. соч., с. 100.

[6] **С. Какабадзе,** Грузинские документы IX-XV вв., москва, 1982, с. 158-161, 101-107.

[7] ჯავახიშვილი ივ. საქართველოს ისტორია: XI-XV საუკუნეები. თბილისი 1949, გვ. 209, გვრიტიშვილი დ., ნარკვევები საქართველოს ისტორიიდან (XIII–XIVსს.), თბილისი, 1962, გვ.; Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. II, էջ 337:

[8] **Ш. Месхия,** указ. соч., стр. с. 100.

ղաք եւ որի բնակչության ստվար զանգվածը, ըստ վավերագրի՝ հայ վաճառականներն էին: Այդմ կարող ենք համարել, որ 1392թ. վավերագրում Բազարիյում հայ վաճառականների մասին հիշատակությունը հավելվել է Ալեքսանդր I օրոք , երբ թագավորը հաստատեց այն:

1436 թ. հայկական ձեռագիր հիշատակարանի համաձայն՝ Ալեքսանդր I-ի օրոք Գանձակ քաղաքից մեծ թվով հայեր հաստատվում են Կրծանիս գյուղում[1]: Հարկ ենք ենք համարում մեջբերել ամբողջական հիշատակարանը՝ լուսաբանելու համար որոշ պատմական հարցեր: Ըստ Հովհաննես գրչի.

«Գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՊԶԵ (1436), ի յաշխարհս Վրացտան, ի մայրաքաղաքիս Տփխեաց, մերձակայ գեղս Կրծանիս, ընդ հովանեաւ կաթուղիկէ սուրբ Աստուածածնիս եւ այլ ամենայն սուրբ եկեղեցեացս … ի թագաւորութեան Վրաց Ալէքսանդրին, ի նեղ եւ ի դառն ժամանակիս, որ վասն իմ ծովացեալ մեղացն եկն չար անաւրէն Շաղռուխն, ու մեծ աւերումն [արար] աշխարհին: Ապայ գնացաք ի տեղիքն երախտեաց՝ Երուսաղէմ, եւ համբուրեցաք զսուրբ գերեզմանն, եւ այլ ամենայն սուրբ տնաւրինականքն: Յետ գալն՝ ի Դմբշխայ զգրոցս թուխթն եւ այլ գրանց առաք, եւ եկաք բերաք ի Վրացտուն: Թողաք զթուղթս ու գնացաք ի Գանձակ, մեր եղբաւր եւ ընդանացն կարաւտ էաք: Այլ չարիքն ու պատուհասն անաւրէն ջաղաթին նեղեցուց զմեզ, այլ մեք առաք զմեր եկեղեցւոյ հանդերձն՝ շուրջառներ, զԱւետարան, ու զգրանք, ու զբուրվառ, եւ զայլ ամենայն հոգւոյ եւ մարմնոյ զինչ որ կայր՝ զամէն առաք, ի Վրացտուն կու գայաք բազում կարվան...: Յիշեցէք զՍարգիս աբեղէն Տփխե[ա]ց կաթուղիկին աւագերէցն... այլ եւ զհամշիրայ հոգեւոր եղբայրքն իմ՝ զՅորդանան աբեղայն եւ **զՍտեփաննոս քահանայն Կրծանեցին**…: Քանզի անարժանս Յոհաննէս՝ անուամբ եւ ոչ գործաւք քահանայ, ըստացայ...»[2]:

Նկատենք, որ Կրծանիս գյուղում Սբ. Աստվածածին եկեղեցու առկայությունն անհերքելի է դարձնում այն փաստը, որ այստեղ մինչեւ XV դարը եղել է հայկական համայնք: Քահանա գրիչը ուխտագնացության է գնում Երուսաղեմ, և գրչագրերի թուղթ ու այլ պարագաներ թողնելով Կրծանիսում, գնում է Գանձակ, որտեղ ապրում էին իր եղբայրները: Ամենայն հավանականությամբ, ձեռագրի հեղինակ Հովհաննեսն ավելի վաղ բնակություն է հաստատել Վրաստանում, իսկ եղբայրները շարունակում էին ապրել Գանձակում: Ձեռագրում վկայված է, որ Գանձակը ենթարկվում է Ջաղաթի իլխանի հարձակմանը, որի պատճառով Հովհաննեսն իր

---

[1] **Թ. Խ. Հակոբյան,** Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Երեւան, 1991, էջ 255:

[2] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 461-462:

եղբայրների եւ մի մեծ քարավանի հետ բռնում է գաղթի ճանփան դեպի Վրաստան: Կրծանիսում գաղթականները արժանանում եմ մեծ հոգատարության: Ձեռագրի վերջում Հովհաննեսը շնորհակալությունն է հայտնում իր հոգևոր եղբայրներին՝ Հորդանան աբեղային, «զՍտեփաննոս քահանայն Կրծանեցուն» եւ «զԿրծանեց զամենայն ժողովուրդն»: Ամենայն հավանականությամբ ձեռագրի թյուրըմբռնան արդյուքում վրաց հետազոտողներ Շ. Թեթեւաձեն եւ Օ. Թեթեւաձեն եկել են այն եզրահանգման, թե ձեռագրի վերջում Հովհաննեսը երախտագիտություն է հայտնում տեղի վրաց ժողովրդին[1]: Հարցին այս տեսանկյունից նայելով՝ մի կողմ է դրվում Կրծանիսում մինչեւ XV դարը հայերի եւ հայկական համայնքի գոյության փաստը: Ուստի չանտեսելով վրաց ժողովրդի աջակցությունը եւ ներկայությունը Կրծանիսում, պետք է ընգծել, որ ըստ ձեռագրի՝ Կրծանիսի հայ բնակչությունն է՝ Ստեփանոս քահանայի գլխավորությամբ առաջինը ձեռք մեկնել իր հայրենակիցներին:

Ալեքսանդր I-ի օրոք հայերով շարունակում է համալրվել նաեւ Վարդիսուպանի գյուղը[2]: Այսպես, ըստ ձեռագիր հիշատակարաններից մեկի.

«Քրիստոս Աստուած... ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց՝ զեղկելի Կարապետ աբեղայիս, ...Եւ զհայրեղբարս իմ զԱկոբ, եւ զամուսինն իւր զԱյմելիքն, եւ զորդին իւրեանց Աշայն… Քմիկս, որ շատ կու ծառայէ մեզ, եւ ամենեքեան աւրհնեալ Աստուածոյ ի մէնջ, ամէն: Գրեցաւ գիրս ի թվականի Հայոց ՊԶԷ [1438 թ.] Էր, ի Մուխրանիս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի գեղս, որ կոչի Վարդիսուպան. երախտաւորք մեր աւրհնեալ եղիցի[ն], ամէն»[3]:

Ձեռագրից պարզ է դառնում, որ Կարապետը ծագում է հոգեւորականների ընտանիքից. հայրը եղել է քահանա, եւ ինքը եւս հոգեւորական էր: Կարապետն իր ընտանիքով գաղթել է Վարդիսուպան գյուղ, որտեղ էլ իրենց օգնել են իր ուսուցիչ տեր Սարգիսը, հորեղբայրը եւ մյուս հարազատները, ովքեր ավելի վաղ էին հաստատվել Վարդիսուպանում: Նկատենք, որ Սբ. Աստվածածին եկեղեցու գոյությունը հավաստում է, որ մինչեւ 1438 թ. Վարդիսուպանն ունեցել է կազմակերպված հայկական համայնք: Այստեղ եւս, վրաց հետազոտողներն ընդգծում են վրաց ժողովրդի գրկաբացությունը փախստական հայերի նկատմամբ[4]: Պետք է նշել, որ ձեռագրում անդրադարձ չկա հայերին վրաց ժողովրդի ընդունելու կամ

---

[1] **Ш. Тетвадзе, О. Тетвадзе,** Армяне в Грузии, (с древних времён до сегодняшнего дня), Тбилиси 2008, с. 24:Այսուհետ՝ Армяне в Грузии:

[2] Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, էջ 785:

[3] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 489:

[4] Армяне в Грузии, с. 24.

վրացիների առանձնակի վերաբերմունքի մասին: Կարապետը պարզապես շնորհակալություն է հայտնում իրեն բոլոր օգնողներին եւ առանձնաբար հիշատակում ազգությամբ հայ եւ Վարդիսուպանի բնակիչ իր ազգականներին:

Ալեքսանդր I-ի օրոք Վրաստանում շարունակում էին ապրել նաեւ մեծանուն հայերը. այսպես, 1438 թ. ձեռագիր հիշատակարանից իմանում ենք, որ այդ Ավետարանի պատվիրատուն է եղել «խոճա» (մեծանուն) Ճանազիզ Տփղիսեցին, ով իր ծնողների հետ մեկնել է Երուսաղեմ եւ այստեղ «բազում արդիւնս արար ի յաղքատս եւ ի կրաւնաւորս յեկեղեցիս[1]»:

1440 թվականին Վրաստանը ենթարկվեց կարա-կոյունլու Ջահանշահի (1437-1467) ներխուժումներին. Ալեքսանդր I-ը մերժեց թշնամուն հնազանդվելու եւ հարկ վճարելու առաջարկը, եւ թուրքմենների բանակը ներխուժեց Վրաստան[2]: Թշնամին նախ գրավեց ու ավերեց Սամշվիլդեն, ապա Տփղիսը: Վրաց բնակչության հետ միասին մեծ կորուստներ էին կրում նաեւ տեղի հայ բնակիչները. այսպես, միայն Ջհանշահի դեպի Վրասատան արշավանքի ժամանակ ավելի քան 12000 հայ գերի է ընկնում, որոնց մի մասը սպանվում է[3]:

Չնայած այս ամենին հայերի հոսքը դեպի Վրաստան եւ այստեղ բնակվելու ձգտումը շարունակվում է նաեւ Ալեքսանդր I-ի որդիների օրոք: Ալեքսանդրին հաջորդեցին որդիները՝ Վախթանգ III–ը (1442–1446 թթ.) եւ Գիորգի VIII–ը (1446–1466 թթ.): 1448 թ. վերջինիս կողմից հաստատված «Մցխեթի կաթողիկոսության» տրված հրովարտակից պարզ է, որ Մցխեթի շրջակա գյուղերից մեկում՝ Ծիլկանիում[4], եղել է հայկական թաղամաս, որը եւս նվիրվել է Մցխեթի կաթողիկոսարանին.

«Մենք... երկու գահի՝ Լիխիի լեռնաշղթայի երկու կողմի տիրակալը՝ Գիորգի թագավորը... տեղեկացնում եմ (Մցխեթին) ամեն ինչով, պալատով, եկեղեցով, գյուղացիներով, ծառաներով... Կիսաուրն իր կալվածքով, մի հիշատակարանով (Ղազարեի տոնի ժամանակ) կատարեցեք (եւ մյուս վեց հիշատակարան) եւ Ծիլկանիի հայերի թաղամասը (նվիրում ենք)... Սա գրվել է Քռոնիկոն «Ռլվ»-ին, մեր թագավորի արքայության երրորդ տարին, մեր դպիր Կլիմի Կակլաչաձեի ձեռքով»:

Վերջին ստորագրությամբ՝ «Ես, Գիորգի թագավոր հաստատել եմ Աստծո կամքով»[5]:

---

[1] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հտ I, էջ 494:

[2] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ II, էջ 338:

[3] Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Ժ. Խմբ. Գիւտ Աւագ Քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1912.

[4] *ქართლის ცხოვრების* **ტოპონარქიოლოგიური ლექსიკონი,** გ. გამყრელიძე, დ. მინდორაშვილი, ზ. ბრაგვაძე, მ. კვაჭაძე და სხვ., თბ, 2013, გვ 601.

[5] **თ. ჟორდანია,** დასახ ნაშრომი, გვ. 261.

XV դ. ընթացքում Վրաստանում սկսվում է միասնական թագավորության քայքայման գործընթացը, որն առավելապես պայմանավորված էր Վրաստանի վատթարացած արտաքին քաղաքական դրությամբ եւ միաժամանակ երկրի քաղաքական մասնատվածությամբ: XV դարի վերջում Վրաստանը բազմիցս ենթարկվեց թյուրքական ցեղերի հաձակումներին, ինչի արդյունքում վրացական առանձին շրջաններ դարձան սնանկ[1]: Բնականաբար, այդ արշավանքներից մեծ վնասներ էին կրում նաեւ հայերը, արդյունքում նրանց թիվը Վրաստանում գնալով նվազում էր: Այսպես, գրիչ Ալեսիանոսը հիշատակում է, որ 1477 թ. Ուզուն-Հասանի դեպի Վրաստան արշավանքի ժամանակ նա իր եղբոր հետ «եկաք ի Քթիշոյ վանքըս, զի թուրք ազգս բազմազացեալ է եւ հայս նուազեալ....»[2]:

1461 թ. Տրապիզոնի կայսրության փոխարեն Վրաստանի անմիջական հարեւան էր դարձել Օսմանյան պետությունը, որը սպառնում էր Վրաստանին ինչպես հարավ–արեւմուտքից, այնպես էլ հյուսիս–արեւմուտքից[3]: Արդյունքում, Սեւ ծովում Օսմանյան պետությունը ամբողջ առեւտուրը կենտրոնացնում է իր ձեռքում, որը շատ ծանր հետեւանքներ ունեցավ Վրաստանի արեւմտյան շրջանների համար: Մյուս կողմից էլ աշխարհագրական հայտնագործություններից հետո (ծովային ճանապարհը դեպի Հնդկաստան Աֆրիկայի շուրջ, Ամերիկայի հայտնագործումը) դադարեց գործել Եւրոպայից դեպի Հնդկաստան առեւտրական ճանապարհը, որն անցնում էր Այսրկովկասի եւ Միջին Ասիայի երկրներով, առեւտրական ուղիները տեղափոխվեցին դեպի հյուսիս (Սպիտակ ծով – Արխանգելսկ – Մոսկվա – Աստրախան – Իրան)[4]: Հետեւաբար հայերի թվի նվազումը Վրաստանում կարելի է պայմանավորել նաեւ նրանով, որ Վրաստանով անցնող առեւտրական ուղիները կորցրեցին երբեմնի նշանակությունը եւ երկիրը զրկվեց տարանցիկ առեւտրի միջնորդի իր ավանդական դերից: Ի վերջո, 1490 թ. Վրաստանը բաժանվում է երեք թագավորությունների՝ Քարթլիի, Կախեթի, Իմերեթի, ինչպես նաեւ Սամցխեի կիսանկախ աթաբեկության: Քարթլիում գահ է բարձրանում Կոստանդին II-ը (1490-1505 թթ.), Կախեթում՝ Ալեքսանդր I-ը (1476-1511 թթ.), Իմերեթում՝ Ալեքսանդր I-ը (1483-1510 թթ.)[5]:

---

[1] **Ш. Месхия,** указ.соч., с. 91.

[2] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հտ III, էջ 460:

[3] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. II, էջ 338:

[4] Н. **Бердзенишвили**, указ.соч. с. 21; **А.** Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 307-309.

[5] **R. Grigor Sunny,** The making of the Georgian nation, Indiana university press, 1994, p. 45-46.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի մի բերելով վերը շարադրածը՝ կարող ենք եզրակացնել որ XIV-XV դդ. ընթացքում, Հայաստանի տնտեսական եւ քաղաքական կյանքի անկման պայմաններում, հայ բնակչությանը բռնում է գաղթի ուղին։ Այս գործընթացի աջակից են լինում նաև վրաց թագավորները՝ քաղաքային կյանքի կազավորումով՝ այստեղ, ինչպես նաև գյուղերում հայերին բնակեցնելով, առևտրի համար նպատսավոր պայմաններ ստեղծելով, մնացյալ հայ իշխանական տան ներկայացուցիչների իշխանի տիտղոսը պահպանելով։ Որպես այս ամենի արդյունք հայերը ձեռք էին բերում կեցության հնարավորություն, իսկ վրաց կենտրոնական իշխանությունը փորձում էր լուծել իր առջև ծառացած դեմոգրաֆիկ եւ տնտեսական խնդիրները։

Лилит Меликян, Политико-экономические предпосылки для переселения новых групп армянского населения в Картли-Кахети - Статья посвящена анализу политических и экономических предпосылок в Грузии для переселений армянского населения в Картли-Кахети. Известно, что в XIV-XV вв. в Армения и Грузия были вовлечены в борьбу между монгольской державой, Золотой Ордой и государством, созданным Ленком Темуром. В этот период проявление внешних воздействий создает невыносимые условия для проживания в Армении. В ожидании более благоприятных социально-экономических и политических условий армяне массово покидают родину, расселяясь в разных странах, в том числе в Грузии, в частности в Картли-Кахети.

Исследование основано на рукописных источниках Матенадарана имени Месропа Маштоца и грузинских документах. Автор предпринял попытку представить общественно-политическую и экономическую жизнь Армении и Грузии XIV-XV вв. через сравнительно-исторический метод. Особое внимание было уделено политике грузинских царей по отношению к армянам и освещению вытекающих из нее последствий. Рассмотрены деятельность и роль новых переселенц ев армян и их роль в социально-экономической и политической жизни Грузии. В статье также рассматриваются демографические проблемы, возникшие в Грузии, и политика грузинских царей направленное на их решение.

Lilit Melikyan, Political and economic prerequisites for the settlement of new groups of the Armenian population in Kartli -Kakhet - The article is devoted to the analysis of political and economic prerequisites in Georgia for the resettlement of the Armenian population in Kartli-Kakheti. It is known that in the XIV-

XV centuries, Armenia and Georgia were involved in the struggle between the Mongol power, the Golden Horde, and the state created by Lenk Temur. In this period, the manifestation of external influences creates unbearable conditions for living in Armenia. Expecting more favorable socio-economic and political conditions, Armenians leave their homeland en masse, settling in different countries, including in Georgia, particularly in Kartli-Kakhet.

The study is based on manuscript sources of Matenadaran named after Mesrop Mashtots and Georgian documents (XIV-XV). The author attempted to present the social-political and economic life of Armenia and Georgia in the XIV-XV centuries through the comparative-historical method. Special attention was paid to the policy of the Georgian kings in relation to the Armenians and the shedding light on its consequences. New Armenian immigrants' activity and role in the socio-economic and political life of Georgia have been considered. The article also discusses the demographic problems that have arisen in Georgia, and the policy of the Georgian kings aimed at solving them.

Ուղարկվել է խմբագրություն 19.09.2022թ.
Գրախոսվել է 30.09.2022թ.
Ստորագրվել է տպագրության 02.10.2022թ.